Վարչութիւնս անկարող է ոակայն, իր միջոցների սղութեան պատճառով, մի այդպիսի մեծագումար ձեռնարկութիւնը իւր մասնաւոր ոյժերով օր առաջ իրագործել, ուստի իւր ներկայ գրութեամբ ԿՈՉ է անում հայ ժողովրդի ամէն խաւերին, օգնութեան գալ իրան, իւր սկսած, բայց ոյժերից վեր, արդէն հասունացած, անհրաժեշտ ու վեհ գործի իրագործման:

Յիրաւի հայ հասարակութեան բանիմաց, ինտելիգենտ և ապահով մասին է մնում, ուշադիր վերաբերմունք ցոյց տալ դէպի այդ չարաչանջ մշակները, բուռն պատրաստակամութեամբ արձագանք տալ նրա ստիպողական կարիքներին և միջոցներ մատակարարել նախ՝ վաղաժամ մահուան ճիրաններից խլելու մեր թանգ զոհերը և երկրորդ՝ քաջալերելու մեր մտքի յառաջամարտիկներին այն գիտակցութեամբ, թէ հայ ժողովրդի մէջ իրանք ևս ունեն անկեղծ բարեկամներ, որոնք գիտեն ըստ արժանւոյն գնահատել գաղափարական գործի անխոնջ մշակներին:

Եւ այդպէս մենք գործի ոգիզբն ենք դնում: Մենք գծագրում ենք ուղին. թող այժմ գիտակից հայ հասարակութիւնը օգնութեան գայ մեզ և չխնայէ իւր լիառատ օգնութիւնը համակելի գործին: Բաւական է սրբան պարծեցանք խնկելի շիրիմներ տալով, պարծենանք այժմ կենդանի գործի յաւերժ արձաններ կանգնեցնելով:

Կովկասի Հայոց բարեգործական
ընկերութեան Պետիկարակի վարչութիւն

Ստացուած գրքեր

Ա. Յայտնութիւն Յովհաննու, հին հայ թարգմանութեամբ, զառաջին ած ի լոյս ըստ երկուց ձեռագիրս օրինակաց համեմատութեամբ յունական բնագրին և թարգմանութեան ներբսխսի Լամբրոնացւոյ հանդերձ նեբատծութեամբ և ծանօթութեամբք Ֆրէտէրիք Մուրատ տիւրքք Զ.—ԺԲ. Նեբատծութիւն. Եւթն լուսատիպ տախտակօք հանդերձ:

Յերուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց 1911 թ.

Բ. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ. մասն առաջին. Երկրագործութիւն, Խոտաբուծութիւն, Պարտիզպանութիւն, Անասնապահութիւն, (Կաթնատնտեսութիւն) և Մեղուաբուծու-

թիւն. պատկերազարդ. Թիֆլիս 1911։ Հրատարակութիւն «Գիւղատնտես» շաբաթաթերթի. յաւելուած առ № 23

Գ. ՄԵՐ ԲՈՂՈՔՆ ՈՒ ԴՈՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ ԱՆՈՆՑ ՀԱՆԴԷՊ. գրեց Յաքէթ Վարդերեսեան. Պօսթոն. հրատարակութիւն «Ազգ»-ի. Թ. 5.

Դ. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ. I. ընտանի կենդանիները կենդանիների խնամքը և հիւանդութիւններից պաշտպանելու միջոցները։

(Ի. Բ. Լիւբամուդրովի) փոխադրեց Կ. Կ. Մէյլիք-Եաղնազարեանց։ Հրատ Բաքուայ Հայոց Կուլտուրական միութեան։ Բաքու. 1911 թ. գինն է 30 կոպ.

Նոր հրատարակութիւններ

«ՆՈՐ ԶԱՑՆ» գրական—հասարակական շաբաթաթերթի խմբագիրը—հրատարակիչ՝ Տէր-Աբրահամեան.

Տարեկան բաժանորդագինը Երևանում՝ 1. ռ. Երևանից դուրս՝ 2 ռուբլի։ Ամանձին համարը 2 կոպէկ։

Խմբագրութեան հասցէն՝ Эривань Малярская ул. № 6.
Редакція журнала «Норъ-Дзайнъ»

ՆՈՒԻՐԱԿ. կրօնական պաշտօնաթերթ Ամերիկայի. հրատարակւում է ամիսը մի անգամ.

Տարեկան բաժանորդագին. Ամերիկայի համար 75 սենթ Արտասահմանի համար 1 դոլար.

Հասցէ Rev. B. Kaftanian 139 g. 29 th. New York City.

Ս. Էջմիածնի Մայր Աթոռս

ՕՐԱՑՈՅՑ 1912 թ,

Լոյս տեսաւ և վաճառւում է բոլոր հոգևոր հասարակութիւնների մէջ և Մայր Աթոռս Տպարանում։

Գինն է 20 կոպ.